ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՔԻԼԵՍԻ

ՍՈՑԻՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Սարգսյան Հայկ Լևոնի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
Ռուսաստանի գիտությունների
ակադեմիայի արտասահմանյան անդամ

Դարբինյան Արմեն Ռազմիկի

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Խաչատրյան Կառլեն Գագիկի

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 6-ին՝ ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. հունիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: ՄԱԿ-ի «Կայուն զարգացման օրակարգ 2030»-ի միջնաժամկետ գնահատման ընթացքում արձանագրվել է, որ սահմանված 17 կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) շրջանակում թիրախային ցուցանիշների ընդամենը 17%-ն է գտնվում ժամանակին հասնելու հետագծի վրա: Խնդիրն առավել սուր է անցումային տնտեսություն ունեցող երկրների շրջանում, որտեղ ֆորմալ ինստիտուտների և ոչ ֆորմալ մշակութային կոդերի միջև անհամապատասխանությունը հանգեցնում է բարեփոխումների ցածր արդյունավետության և ԿԶՆ-ների թիրախային ցուցանիշներից շեղման: Նպատակների իրականացման հնարավորությունները զգալիորեն տարբերվում են երկրից երկիր ոչ միայն տնտեսական ռեսուրսների, այլև սոցիո-մշակութային գործոնների տարբերության պատճառով:

Հայաստանի Հանրապետությունում այս անհամապատասխանությունը դրսևորվում է հատկապես սուր ձևով. երկիրն ունի ուժեղ կրթական ավանդույթներ և գիտական ժառանգություն, սակայն պետական բյուջեի ընդամենը 2,7%-ն է ուղղվում կրթությանը, իսկ կրթական աղքատությունը կրտսեր դպրոցի աշակերտների շրջանում 2015 թվականին կազմել է 35,8%, և մինչև 2019 թվականը նվազել է 27%-ի: Այսպիսով՝ ՀՀ-ի համար ԿԶՆ-ների իրականացման գլխավոր մարտահրավերը ոչ թե ռեսուրսների բացակայությունն է, այլ դրանց ավելացման օպտիմալ կառուցվածքի և մշակութային-ինստիտուցիոնալ արգելքների սերտաճման բացակայությունը: Թեմայի արդիականությունը հիմնավորվում է սոցիո-մշակութային գործոնների կառավարման հայեցակարգային, մեթոդաբանական և կիրառական հիմքերի մշակման անհրաժեշտությամբ:

Ինստիտուտների և մշակութային միջավայրի համաձայնեցվածության որոշիչ դերը հաստատվում է պատմական և ժամանակակից տվյալներով: Միևնույն մշակույթ և ընդհանուր մեկնարկ ունեցող, սակայն տարբեր ինստիտուտներով բաժանված ժողովուրդները ցուցաբերում են բազմապատիկ տարամիտվող հետագծեր. Հարավային և Հյուսիսային Կորեան 1950-ականների սկզբի համադրելի մակարդակից 2018 թվականին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով հեռացել են ավելի քան քսան անգամ (Maddison Project Database, 2023): Հատկապես ցուցանելի է Գերմանիայի դեպքը. վերամիավորումից ավելի քան երեք տասնամյակ անց, միասնական ինստիտուտների և զգալի ինտեգրացիոն փոխանցումների պայմաններում, արևելյան հողերը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով շարունակում են արևմտյաններին զիջել մոտ մեկ հինգերորդով (Statistisches Bundesamt), ինչը վկայում է մշակութային-ինստիտուցիոնալ կոդերի կայունության մասին: Այս փաստերը հիմնավորում են սոցիո-մշակութային միջավայրի դիտարկումը ոչ թե որպես արտաքին ֆոն, այլ որպես պետական կառավարման անմիջական օբյեկտ:

Նույն տրամաբանությունը տարածվում է նաև կայուն զարգացման առանձին բաղադրիչների վրա: Մասնավորապես, ԿԶՆ-ների բնապահպանական բաղադրիչի՝ ԿԶՆ 6-ի, 13-ի, 14-ի և 15-ի համատեքստում, երկրների արդյունքները չեն կարող ամբողջությամբ բացատրվել միայն տնտեսական ռեսուրսներով կամ ֆորմալ ինստիտուտների որակով: Այդ ոլորտում էական դեր են ստանում արժեքամշակութային գործոնները, որոնք պայմանավորում են բնապահպանական վարքագծի, հանրային պատասխանատվության, վստահության և կոլեկտիվ գործողությունների պատրաստակամության տարբերությունները: Այդ պատճառով ատենախոսության մեջ իրականացվում է մշակութային գործոնների ազդեցության բազմակողմանի վերլուծություն ԿԶՆ-ների բնապահպանական բաղադրիչի վրա՝ Հոֆստեդեի և Շվարցի մոդելների, սոցիալական վստահության ցուցանիշների և Ժուրավլյովի դիսկրետ դասակարգման ալգորիթմի համատեղ կիրառմամբ՝ առավելագույն հնարավոր թվով երկրների ընտրանքի հիման վրա:

Սոցիո-մշակութային գործոնների կառավարչական նշանակությունը դրսևորվում է նաև թվայնացման և կայուն զարգացման փոխկապակցության մեջ: Թվային ենթակառուցվածքների և տեխնոլոգիական ներդրումների արդյունավետությունը տարբեր երկրներում կարող է էապես տարբերվել՝ կախված տվյալ հասարակության մշակութային պրոֆիլից, իշխանության հեռավորության ընկալումից, անհատական նախաձեռնության մակարդակից և անորոշության նկատմամբ վերաբերմունքից: Այդ կապակցությամբ ատենախոսության մեջ խնդիր է դրվում բացահայտել երկրների թվային պատրաստվածության քանակական կախվածությունը մշակութային պրոֆիլից և գնահատել մշակութային չափումների միջնորդավորված դերը «թվայնացում — կայուն զարգացում» փոխկապակցության մեջ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է մշակել տեսական-մեթոդաբանական մոտեցումներ ու գործնականորեն կիրառելի գործիքներ սոցիո-մշակութային գործոնների կառավարման համար ԿԶՆ-ների իրականացման համատեքստում: Նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- համակարգել մշակութային-ինստիտուցիոնալ միջավայրի դերի բացահայտման մոտեցումները և ձևակերպել կառավարելիության միասնական պայման, որը միավորում է Էշբիի կիբեռնետիկան, Մոկիրի գիտելիքի աճի տեսությունը, Նորթ–Աճեմօղլու–Աուզանի ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը և Հոֆստեդեի ու Շվարցի չափումները,
- մշակել կառավարելիությունը կանխորոշող բաղադրիչների՝ ինստիտուցիոնալ բազմազանության, գիտելիքի բազմազանության, գիտելի-

քի օգտակար օգտագործման տեղեկատվական գործակցի և կառավարվող բարդության բազմազանության քանակական գնահատման մեթոդաբանությունը,

- իրականացնել մշակութային գործոնների ազդեցության բազմակողմանի վերլուծություն ԿԶՆ-ների բնապահպանական բաղադրիչի վրա՝ Հոֆստեդեի և Շվարցի մոդելների, սոցիալական վստահության ցուցանիշների և Ժուրավլյովի դիսկրետ դասակարգման ալգորիթմի համատեղ կիրառմամբ՝ հնարավոր առավելագույն թվով երկրների ընտրանքի հիման վրա,
- բացահայտել երկրների թվային պատրաստվածության քանակական կախվածությունը մշակութային պրոֆիլից և գնահատել մշակութային չափումների միջնորդավորված դերը «թվայնացում — կայուն զարգացում» փոխկապակցության մեջ:
- իրականացնել Անհրաժեշտ բազմազանության օրենքի անհավասարության պայմանի քանակական ստուգումը՝ որպես սոցիալ-տնտեսական համակարգերի կառավարելիության ախտորոշիչ չափանիշ,
- մշակել մշակութածնության և կրթական աղքատության կառավարման դինամիկ տնտեսամաթեմատիկական մոդելները Հայաստանի Հանրապետության նյութի վրա՝ օպտիմալ կառավարման տեսության ապարատի կիրառմամբ,
- ձևակերպել գործնական առաջարկություններ ՀՀ կայուն զարգացման պետական քաղաքականության համար՝ քանակական թիրախային ուղենիշներով և բյուջետային ծախսերի առաջնահերթությունների որոշմամբ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը երկրների սոցիալ-տնտեսական համակարգերն են՝ որպես կառավարման օբյեկտ ԿԶՆ-ների իրականացման գործընթացում, դիտարկված ինստիտուտների, գիտելիքի և մշակույթի միասնության մեջ: Հետազոտության առարկան մշակութային-ինստիտուցիոնալ միջավայրի քանակական գնահատման և սոցիոմշակութային գործոնների կառավարման օրինաչափություններն ու մեխանիզմներն են ԿԶՆ-ների իրականացման համար:

Հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Տեսական հիմք են հանդիսացել ինստիտուցիոնալ տնտեսագիտության (Դ. Նորթ, Դ. Աճեմօղլու, Ջ. Ռոբինսոն, Ա. Ա. Աուզան), գիտելիքի աճի տեսության (Ջ. Մոկիր), կիբեռնետիկ կառավարման տեսության (Ու. Ռ. Էշբիի անհրաժեշտ բազմազանության օրենքը՝ Յու. Ն. Գավրիլեցի մոդիֆիկացմամբ), մշակութային

չափումների տեսության (Գ. Հոֆստեդե, Շ. Շվարց, Ռ. Ինգլհարտ) և վարքագծային տնտեսագիտության (Դ. Կանեման, Ա. Տվերսկի, Ռ. Թալեր) աշխատանքները: Մեթոդական ապարատը ներառում է բազմակի ռեգրեսիա, կլաստերային վերլուծություն, պատկերների ճանաչման ալգորիթմներ (Ժուրավլյովի տեղեկատվական ալգորիթմ) և Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել միջազգային բաց աղբյուրները (WGI, HDI, SDG Index, Hofstede Insights, World Values Survey, European Social Survey, Scimago, Global Innovation Index, Network Readiness Index և այլն: Օգտագործվել են նաև Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալները, Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմավարական ծրագրերը և օրենսդրական ակտերը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակում իրականացված հետազոտության հիման վրա ստացված արդյունքներից գիտական նորույթ արտահայտող հիմնական դրույթներն են.

- Սոցիո-մշակութային գործոնները որակապես նկարագրվող արտաքին համատեքստից կերպափոխվել են պետական տնտեսական քաղաքականության կառավարելի օբյեկտ: Մշակվել է կառավարման գործիքակազմ, որը ներառում է՝ կառավարելիության պայմանը, դրա բաղադրիչների քանակական գնահատման մեթոդաբանությունը, մշակութային բարենպաստության ինդեքսը և օպտիմալ կառավարման դինամիկ մոդելները: Վերջիններս թույլ են տալիս տարբերակել ԿԶՆ-ների իրականացման սահմանափակիչ և ռեսուրս հանդիսացող մշակութային-ինստիտուցիոնալ բնութագրերը, դրանց հիման վրա որոշելով կառավարման ներգործությունների ու բյուջետային ծախսերի առաջնահերթությունները:
- Մշակվել է սոցիալ-տնտեսական համակարգերի կառավարելիության բացահայտման միասնական մոտեցում ԿԶՆ-ների իրականացման գործընթացում, որը մեկ ֆորմալ կառուցվածքում միահյուսում է ինստիտուցիոնալ տնտեսագիտության, գիտելիքի աճի տեսության, կիբեռնետիկայի և մշակութային չափումների նախկինում ինքնուրույն հանդես եկող ավանդույթները և հասցված է գործնական չափման մակարդակի՝ դրա բաղադրիչների կտրվածքով ամբողջական քանակական գնահատման մեթոդաբանության շնորհիվ՝ միջազգային բաց տվյալների բազաների նյութի վրա:
- Իրականացվել է մշակութային գործոնների ազդեցության բազմակողմանի փորձագիտական վերլուծություն ԿԶՆ-ների բնապահպանական բաղադրիչի համար՝ 55 երկրի և 25 փոփոխականի հիման վրա՝ ըստ Հոֆստեդեի, Շվարցի մոդելների և վստահության ցուցանիշների:

- Բացահայտվել և գնահատվել են երկրների թվայնացման պատրաստվածության մշակութային որոշիչները. ցույց է տրվել, որ անհատապաշտությունը, իշխանության ցածր հեռադրությունը և անորոշության նկատմամբ հանդուրժողականությունը վիճակագրորեն նշանակալի կանխատեսում են ցանցային պատրաստվածության ինդեքսը, իսկ մշակութային պրոֆիլը հանդես է գալիս որպես թվային ներդրումների արդյունավետության ցուցիչ՝ ԿԶՆ9, ԿԶՆ17 հասանելիության գործընթացում:
- Մշակվել են մշակութածնության և կրթական աղքատության օպտիմալ կառավարման մոդելները՝ փորձագիտորեն ստուգված դիտարկվող երկրների այդ թվում Հայաստանի Հանրապետության տվյալների հիման վրա: Կրթական աղքատության մոդելը չափաբերվել է ավելի վաղ փաստացի արժեքի վրա և հաստատվել հետագա փաստացի տվյալներով:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները և դրանում ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, մասնավորապես՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և շահագրգիռ այլ պետական մարմինների կողմից՝ ոլորտի ռազմավարական, ծրագրային փաստաթղթերի մշակման, վարվող պետական քաղաքականության կատարելագործման գործընթացներում: Ապահովում են պետական կառավարման գործիքներ, կրթական աղքատության կառավարման մոդելը՝ որպես կրթական ծախսերի առաջնահերթության հիմնավորման գործիք, և կառավարելիության պայմանը՝ որպես զարգացման ռազմավարության հավասարակշռվածության թեստ: Արդյունքները կիրառելի են ՀՀ կառավարության կողմից ԿԶՆ-ների ռազմավարական ծրագրերի մշակման, ինստիտուցիոնալ բարեփոխումների հիմնավորման, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցման համար:

Արդյունքների հավաստիությունը: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովվում է միջազգայնորեն ճանաչված բաց տվյալների օգտագործմամբ, ընդհանուր ընդունված էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ, երկրների լայն ընտրանքի վրա էմպիրիկ ստուգմամբ և արդյունքների կայունության վերլուծությամբ այլընտրանքային սպեցիֆիկացիաներում: Մշակութածնության և կրթական աղքատության մոդելների կանխատեսումները համադրվել են Հայաստանի փաստացի պատմական տվյալների հետ, ինչը հաստատում է մոդելների կանխատեսողական կայունությունը:

Արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ԵՊՀ-ի համապատասխան ամբիոնում և ներկայացվել միջազգային գիտաժողովներում: Հետազոտության արդյունքները զեկուցվել են ԵՊՀ «Տնտեսագիտության և կառավարման» ֆակուլտետի գիտական սեմինարում 2025 թվականի դեկտեմբերին՝ «Սոցիոմշակութային գործոնների կառավարումը կայուն զարգացման նպատակների իրականացման համար» զեկուցմամբ, ինչպես նաև միջազգային գիտաժողովներում.

«Մեծ Եվրասիա. զարգացման և համագործակցության ազգային ու քաղաքակրթական հայեցակետերը» VII միջազգային գիտագործնական գիտաժողովում, որը կայացել է Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) 2024 թվականի նոյեմբերի 27–29-ին՝ «"Մշակութային էկոհամակարգը" ԿԶՆ-ներում որպես ինտեգրացիոն գործընթացների տարածաշրջանային չափման գործոն» զեկուցմամբ՝ «Ինտեգրացիոն գործընթացների, միջազգային փոխգործակցության և համագործակցության տարածաշրջանային չափումը» բաժնում, և

ՀՌՀ տասնութերորդ տարեկան միջազգային գիտաժողովում՝ «Գովազդ և հասարակայնության հետ կապեր» բաժնում, որը կայացել է Երևանում 2024 թվականի դեկտեմբերի 2–6-ին՝ «Ընթերցանության զարգացման խթանման տնտեսական մեխանիզմները. օպտիմալ կառավարման մոդել Հայաստանի համար» զեկուցմամբ:

Ատենախոսության թեմայով հրապարակվել է 11 գիտական հոդված, այդ թվում՝ Scopus և Web of Science համակարգերում ինդեքսավորված հանդեսներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից (285 անվանում) և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 164 էջի վրա՝ առանց հավելվածների, և պարունակում է 20 աղյուսակ, 3 գծապատկեր, 23 նկար, 1 սխեմա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:



Սխեմա 1.0. Ատենախոսության տեսական բլոկների հիերարխիան՝ կիբեռնետիկայի (Էշբի, Գավրիլեց, Վիներ), ինստիտուցիոնալիզմի (Նորթ, Աճեմօղլու, Աուզան), գիտելիքի աճի տեսության (Մոկիր, Արոու, Ռոմեր) և մշակութաբանության (Հոֆստեդե, Շվարց, GLOBE) ավանդույթների սինթեզը՝ R + β·K ≥ Q կառավարելիության պայմանի, CCI-ինդեքսի, ուսման աղքատության օպտիմալ կառավարման մոդելի և կառավարչական արդյունքների կտրվածքով:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Արդիականության հիմնավորման մեջ ցույց է տրվում, որ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման օրակարգ 2030»-ի թիրախային ցուցանիշների ընդամենը 17%-ն է գտնվում ժամանակին հասնելու հետագծի վրա, իսկ սոցիալ-տնտեսական համակարգերի՝ ռեսուրսները զարգացման արդյունքների վերածելու

ունակությունը զգալիորեն տարբերվում է երկրից երկիր ոչ միայն ֆինանսավորման, այլև սոցիո-մշակութային գործոնների տարբերության պատճառով: Բերվում են պատմական և ժամանակակից տվյալներ՝ ինստիտուտների և մշակութային միջավայրի համաձայնեցվածության որոշիչ դերի վերաբերյալ. միևնույն մշակույթ ունեցող, սակայն տարբեր ինստիտուտներով բաժանված ժողովուրդների (Կորեա, Գերմանիա) և համադրելի մեկնարկ ունեցող, սակայն տարամիտված երկրների (ԱՄՆ և Արգենտինա) օրինակները:

ՍՈՑԻՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

- Առաջին գլուխը նվիրված է հետազոտության տեսական հիմքի ձևավորմանը՝ չորս առանձին զարգացող գիտական ուղղությունների՝ ինստիտուցիոնալ տնտեսագիտության, գիտելիքի աճի տեսության, կառավարման կիբեռնետիկայի և մշակութային չափումների տեսության, համադրման միջոցով:

- ***Կայուն զարգացման հայեցակարգը և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները***
- Դիտարկվել է կայուն զարգացման հայեցակարգի էվոլյուցիան՝ Բրունդտլանդի հանձնաժողովի սահմանումից մինչև «Օրակարգ 2030»-ի 17 նպատակները և դրանց թիրախային ցուցանիշները: Ցույց է տրվել, որ ԿԶՆ-ների իրականացման ընթացքը ոչ գծային է և ունի միջերկրային զգալի տարբերություններ, որոնք լիարժեք չեն բացատրվում տնտեսական ռեսուրսների ծավալով: Հիմնավորվում է, որ ԿԶՆ-ների ինդեքսը կարող է ծառայել որպես զարգացման ինտեգրալ արդյունքային ցուցանիշ՝ սոցիո-մշակութային գործոնների ազդեցության գնահատման համար:

- ***Պատմական նախադրյալները. Իբն Խալդունի ներդրումը***
- Ներկայացված է սոցիո-մշակութային գործոնների դերի պատմական ընկալումը՝ սկսած Իբն Խալդունի «ասաբիյա» (խմբային համերաշխություն) հասկացությունից, որն առաջիններից մեկն էր կապ հաստատելու հասարակության մշակութային համախմբվածության և պետական կազմավորումների կենսունակության միջև: Ցույց է տրվում, որ սոցիո-մշակութային գործոնների տնտեսական դերի գաղափարն ունի խոր պատմական արմատներ, ինչը հիմնավորում է դրա ժամանակակից ֆորմալացման անհրաժեշտությունը:

- ***Կիբեռնետիկան և կառավարման համակարգային տեսությունը***

- Քննարկվել է Ու. Ռ. Էշբիի անհրաժեշտ բազմազանության օրենքը, ըստ որի կառավարող համակարգի բազմազանությունը պետք է համապատասխանի կառավարվող միջավայրի բազմազանությանը: Ներկայացված է Կոնանտ–Էշբիի «լավագույն ռեգուլյատորի» թեորեմը և Յու. Ն. Գավրիլեցի՝ սոցիալ-տնտեսական համակարգերի համար մշակած մոդիֆիկացիան: Հիմնավորվում է, որ բազմազանության չափման համար բնական է Հարթլիի լոգարիթմական չափը, որը հնարավորություն է տալիս կառավարելիության պայմանը ձևակերպել քանակական, այլ ոչ թե զուտ որակական ձևով:

- ***Ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը և մշակույթի դերը ինստիտուտների ձևավորման մեջ***
- Վերլուծվել են Դ. Նորթի, Դ. Աճեմօղլուի և Ջ. Ռոբինսոնի աշխատանքները, որոնք հաստատում են ինստիտուտների որակի՝ իրավունքի գերակայության, կարգավորման որակի, կոռուպցիայի վերահսկման, որոշիչ դերը երկարաժամկետ տնտեսական աճում: Առանձին քննարկվում է Ա. Աուզանի մշակութային կոդերի և ուղու կախվածության (path dependence) տեսությունը, որը մշակույթը դիտարկում է որպես ինստիտուցիոնալ զարգացման ընթացքը պայմանավորող գործոն: Ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը մշակույթը մեկնաբանում է որպես «ոչ ֆորմալ սահմանափակումներ»՝ բովանդակային առումով ճշգրիտ, սակայն բյուջետային պլանավորման համար ոչ պիտանի:

- ***Վարքագծային տնտեսագիտությունը և մշակութային տարբերությունների հիմքերը***
- Դիտարկվել են Դ. Կանեմանի, Ա. Տվերսկու և Ռ. Թալերի աշխատանքները՝ որոշումների կայացման ճանաչողական կողմնակալությունների և հեռանկարների տեսության վերաբերյալ: Ցույց է տրվում, որ անհատական մակարդակում դրսևորվող վարքագծային օրինաչափությունները հավաքական մակարդակում ձևավորում են կայուն մշակութային պրակտիկաներ, որոնք ազդում են խնայողության, ներդրումների և երկարաժամկետ պլանավորման վրա:

- ***Մշակութային չափումները. տարբերությունների վերլուծության էմպիրիկ մոդելները***
- Համակարգվել են մշակութային տարբերությունների քանակական չափման հիմնական մոտեցումները՝ Գ. Հոֆստեդեի վեց չափումները (անհատականություն, իշխանական հեռավորություն, անորոշության խուսափում, արականություն, երկարաժամկետ կողմնորոշում, ներողամտություն), Շ. Շվարցի արժեքային կողմնորոշումները և Ռ.

Ինգլհարտի աշխարհայացքային քարտեզը: Հիմնավորվում է այս չափումների համադրման հնարավորությունը միասնական տեղեկատվատեսական մոտեցման ներքո՝ որպես մշակութային բարենպաստության ինդեքսի կառուցման հիմք:



Պատկեր 1. Հայաստանի և հարևան երկրների՝ Ռուսաստան, Իրան, Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա, մշակութային դիմագծերի համեմատությունը Հոֆստեդեի չափումներով՝ իշխանության հեռադրություն, անհատականություն, առնականություն, անորոշությունից խուսափում, երկարաժամկետ կողմնորոշում, հանդուրժողականություն:

- ***Արժեքների ձևավորման աղբյուրները***

- Վերլուծվել են արժեքների ձևավորման աղբյուրները՝ կրոնը, պատմական ժառանգությունը, կրթական համակարգը և սոցիալականացման ինստիտուտները: Ցույց է տրվում, որ արժեքները բաժանվում են համեմատաբար կայուն կորիզային և ավելի փոփոխական ծայրամասային շերտերի, ինչը հիմք է ստեղծում սոցիո-մշակութային գործոնների՝ դանդաղ և արագ բաղադրիչների տարբերակման համար:

- ***Վստահությունը և սոցիալական կապիտալը***

- Քննարկվել է վստահության՝ որպես սոցիալական կապիտալի առանցքային բաղադրիչի դերը: Տարբերակվում են ընտանեկան (նեղ շառավղով) և

ընդհանրացված (լայն շառավղով) վստահությունը. վերջինս, ինչպես ցույց է տրվում հետագա գլուխներում, դրականորեն կապված է ինստիտուտների որակի և ԿՁՆ-ների իրականացման հետ:

Մշակույթ և զարգացում. բանավեճ մշակութային գործոնների դերի շուրջ

- Ներկայացված է գիտական բանավեճը մշակույթը որպես զարգացման ինքնուրույն գործոն դիտարկող և այն ինստիտուտներին ստորադասող մոտեցումների միջև: Հիմնավորվում է, որ այս հակադրությունը հաղթահարվում է տեղեկատվատեսական սինթեզի շրջանակում, որտեղ ինստիտուտները, գիտելիքը և մշակույթը դիտարկվում են ոչ թե որպես մրցակցող, այլ որպես միասնական կառավարման համակարգի փոխլրացնող խողովակներ:
- ***Գիտելիքի աճի տեսությունը. Ջոել Մոկիր***
- Վերլուծված է Ջ. Մոկիրի՝ կուտակված օգտակար գիտելիքի՝ որպես «Մեծ հարստացման» ինքնուրույն գործոնի տեսությունը, որը տարբերակում է իմացական (պրոպոզիցիոնալ, «ինչ-գիտելիք») և կիրառական (պրեսկրիպտիվ, «ինչպես-գիտելիք») գիտելիքը: Հիմնավորվում է գիտելիքի խողովակի՝ որպես ինստիտուցիոնալ խողովակից տարբերվող ինքնուրույն բաղադրիչի առանձնացման անհրաժեշտությունը:
- ***Օպտիմալ կառավարման տեսության մեթոդաբանական հիմքերը***



Պատկեր 2. Օպտիմալ կառավարման տեսության մեթոդաբանական ժառանգականությունը՝ Լ.Ս. Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքից (1956–1961 թթ.) մինչև Քիլեր–Սպենս–Ձեքհաուզերի առողջապահական ներդրումների մոդելը (1972 թ.) և Սարգսյան–Մարտիրոսյանի մշակութաձնության ու կրթական աղքատության կառավարման մոդելները (2024–2025 թթ.):

○ Ներկայացված է Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքը՝ որպես դինամիկ համակարգերի օպտիմալ կառավարման ապարատ, որը կիրառվում է երրորդ գլխի մոդելներում: Հիմնավորվում է դրա կիրառելիությունը մշակութածնության և կրթական աղքատության կառավարման խնդիրների նկատմամբ:

Գլխի կենտրոնական մեթոդաբանական արդյունքը. գլխի վերջում ձևակերպվում է աշխատանքի առանցքային արդյունքը՝ կառավարելիության միասնական պայմանը $R + \beta \cdot K_{\perp} \geq Q$, որտեղ R-ն ինստիտուցիոնալ բազմազանությունն է, $K_{\perp}$-ն՝ ինստիտուցիոնալ խողովակից օրթոգոնալացված գիտելիքի բազմազանությունը, β-ն՝ գիտելիքի օգտակար օգտագործման տեղեկատվական գործակիցը, Q-ն՝ կառավարվող բարդության բազմազանությունը: Ցույց է տրվում, որ ինստիտուցիոնալ և գիտելիքի խողովակների գումարային ադիտիվ ներկայացումը արտածվում է Հարթլիի լոգարիթմական չափի հատկություններից և Կոնանտ–Էշբիի թեորեմից, ինչը պայմանին հաղորդում է մաթեմատիկական խստություն: Ձևակերպվում է նաև կառավարելիության դեֆիցիտի հասկացությունը՝ որպես վիճակ, երբ ինստիտուտների և օգտագործվող գիտելիքի համակցված հզորությունն անբավարար է ԿՀՆ-ների առաջադրած խնդիրների բազմազանությունը ծածկելու համար:



Պատկեր 3. Սոցիո-մշակութային համակարգի կառավարելիության պայմանը՝ $R + \beta \cdot K_{\perp} \geq Q$:

ՍՈՑԻՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ գլխում իրականացվում է առաջին գլխում ձևակերպված տեսական դրույթների էմպիրիկ ստուգումը:

- ***Մշակութային չափումները և ԿԶՆ-ների ինդեքսը.***
- Կառուցվել է մշակութային բարենպաստության ինդեքսը (CCI)՝ ռեգրեսիայի մեթոդով չափաբերված կշիռներով:



Պատկեր 4. Մշակութային բարենպաստության ինդեքսի (CCI) և ԿԶՆ-ի իրականացման ինդեքսի (SDG) միջև փոխկապակցությունը երկրների ընտրանքով՝ գծային ռեգրեսիայի հավասարումով: Հայաստանի դիրքը նշված է գծից վեր՝ որպես ակնկալվող մակարդակից բարձր արդյունք համեմատաբար ցածր CCI-ի պայմաններում:

- Միաչափ CCI-ի և ԿԶՆ-ների ինդեքսի միջև որոշման գործակիցը կազմում է, այսինքն՝ մշակութային գործոնները բացատրում են ԿԶՆ-ների ինդեքսի միջերկրային ցրվածության կեսը: Չորս առանցքային չափումների (անհատականություն, իշխանական հեռավորություն, անորոշության խուսափում, երկարաժամկետ կողմնորոշում) ընդգրկմամբ որոշման գործակիցը, իսկ ինստիտուցիոնալ և կրթական բաղադրիչների ավելացմամբ լրիվ մոդելը՝ R^2 = 0,85-ի, ինչը հաստատում է մշակութային

գործոնների՝ ինստիտուցիոնալ և կրթական խողովակներով չմիջնորդավորված ինքնուրույն ներդրումը:
Ինստիտուցիոնալ (R) և գիտելիքի խողովակների (K) միջև բարձր փոխկապվածությունը հաղթահարվել է գիտելիքի խողովակի օրթոգոնալացման միջոցով, ինչը ապահովում է գնահատումների կայունությունը: Գնահատվել է գիտելիքի օգտակար օգտագործման գործակիցը:

- ***Կրոնական և լեզվական գործոնները. տեղեկատվական պարունակության քանակական գնահատում***
- Տեղեկատվատեսական վերլուծությունը ցույց է տվել, որ մշակութային չափումներն ունեն գերակայող բացատրողական ուժ՝ համեմատ դավանանքային և լեզվական պատկանելության, որոնք ավելացնում են փոքր, թեև վիճակագրորեն նշանակալի, լրացուցիչ ներդրում: Այս արդյունքը հիմնավորում է CCI-ի բաղադրիչների ընտրությունը և հավասար կշիռներով ագրեգացումից հրաժարվելը:

- ***Եվրասիական տարածաշրջանի մշակութային բազմազանությունը և զարգացման օրինաչափությունները***
- Կլաստերային վերլուծության միջոցով առանձնացվել են Եվրասիական տարածաշրջանի մշակութային խմբերը և բացահայտվել դրանց զարգացման օրինաչափությունների տարբերությունները: Ցույց է տրվում, որ մշակութային հարևանությունը պարտադիր չէ համընկնի զարգացման հետագծերի հետ, ինչը հաստատում է ինստիտուցիոնալ գործոնի ինքնուրույն դերը:

- ***Մշակութային գործոնները և ԿՀՆ-ների բնապահպանական բաղադրիչը***
- Իրականացվել է մշակութային գործոնների ազդեցության բազմակողմանի էմպիրիկ վերլուծություն ԿՀՆ-ների բնապահպանական բաղադրիչի վրա՝ 55 երկրի և 25 փոփոխականի հիման վրա՝ ըստ Հոֆստեդեի և Շվարցի մոդելների, ինչպես նաև սոցիալական վստահության ցուցանիշների: Վերլուծությունը ցույց է տվել, որ ԿՀՆ-ների բնապահպանական բաղադրիչի արդյունքները պայմանավորված են ոչ միայն տնտեսական և ինստիտուցիոնալ գործոններով, այլև արժեքամշակութային առանձնահատկություններով, որոնք ազդում են բնապահպանական վարքագծի, հանրային պատասխանատվության և կոլեկտիվ գործողությունների պատրաստակամության վրա:

○ ***Մշակույթի ազդեցությունը թվային պատրաստվածության վրա. ռեգրեսիոն վերլուծություն***

○ Բացահայտվել և քանակապես գնահատվել են երկրների թվային պատրաստվածության մշակութային դետերմինանտները: Ցույց է տրվել, որ անհատապաշտությունը, իշխանական ցածր հեռավորությունը և անորոշության նկատմամբ հանդուրժողականությունը վիճակագրորեն նշանակալիորեն կանխատեսում են Ցանցային պատրաստվածության ինդեքսը: Միաժամանակ մշակութային պրոֆիլը հանդես է գալիս որպես թվային ներդրումների արդյունավետության մոդերացնող գործոն՝ ԿԶՆ 9-ի և ԿԶՆ 17-ի հասանելիության գործընթացում: Այս արդյունքը ընդլայնում է մշակութային գործոնների կիրառելիության ոլորտը դեպի թվային տնտեսության և կայուն զարգացման փոխկապակցության վերլուծությունը:

○ ***Մշակույթը և վերարտադրողական առողջությունը. Հայաստանի դեպքը***

○ Հայաստանի օրինակով ուսումնասիրվել է մշակութային և սոցիալական գործոնների ազդեցությունը վերարտադրողական առողջության ցուցանիշների վրա, ինչը ցույց է տալիս սոցիո-մշակութային գործոնների կառավարման մոտեցման կիրառելիությունը կոնկրետ ոլորտային քաղաքականության խնդիրների նկատմամբ:

ՍՈՑԻՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՊՐՈԲԱՑԻԱ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երրորդ գլուխը նվիրված է կառավարման դինամիկ մոդելների կառուցմանը, կառավարելիության պայմանի էմպիրիկ ստուգմանը և Հայաստանի Հանրապետության օրինակով արդյունքների ապրոբացիային:

○ ***Մշակութածնության կառավարման տեսական մոդելը կրթական գործընթացներում***

• Կառուցվել է մշակութածնության կառավարման դինամիկ տնտեսամաթեմատիկական մոդելը: Մշակութածնությունը սահմանվում է որպես մշակութային բնութագրերի ձևավորման, վերարտադրության և ուղղորդված փոփոխության գործընթաց, որը՝ ի տարբերություն դասական ստոխաստիկ ընկալման, դիտարկվում է որպես կառավարելի դինամիկ համակարգ: Կառավարելիությունն ապահովվում է արագ բաղադրիչների (կրթություն, ընթերցանություն) միջոցով, մինչդեռ դանդաղ արժեքային կորիզները մոդելում դիտարկվում են որպես պարամետրեր, այլ ոչ թե կառավարող փոփոխականներ:

○ ***Կրթական աղքատության կրճատման օպտիմալ կառավարման մոդելը***

○ Մշակվել է կրթական աղքատության կրճատման օպտիմալ կառավարման մոդելը՝ Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքի կիրառմամբ: Մոդելում հագեցման էֆեկտը ներդրված է կառուցվածքային ձևով՝ ընդգրկվածության լոգիստիկ սահմանափակման և կառավարող ներգործությունների նվազող արդյունավետության միջոցով: Հայաստանի մոդելը չափաբերվել է 2015 թվականի կրթական աղքատության փաստացի արժեքի վրա և վալիդացվել 2019 թվականի փաստացի տվյալներով, ինչը հաստատում է մոդելի կանխատեսողական կայունությունը:



Պատկեր 5. Հայաստանում կրթական աղքատության դինամիկայի կանխատեսումը 2015–2030 թթ.՝ օպտիմալ կառավարման մոդելով (Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունք). մոդելը չափաբերված է 2015 թ. ելակետային արժեքի վրա (TIMSS), մոնիթորինգի հակիչ կետ՝ 2025 թ., թիրախային մակարդակ՝ 2030 թ.: Որպես միջազգային չափանիշ ներկայացված է Ֆինլանդիան:

Զգայունության վերլուծությունը ցույց է տվել, որ ամենաազդեցիկ կառավարող ներգործությունը նախադպրոցական ընդգրկվածության ընդլայնումն է, ինչը որոշում է կրթական բյուջետային ծախսերի առաջնահերթ ուղղությունը և ապահովում է կրթական աղքատության կրճատման օպտիմալ հետագիծ դեպի 2030 թվականի թիրախ:

- ***Կիբեռնետիկայի, ինստիտուցիոնալ տնտեսագիտության և գիտելիքի աճի տեսության սինթեզը***
- Իրականացվել է կառավարելիության պայմանի էմպիրիկ ստուգումը 90 երկրների վրա: Պայմանին բավարարող երկրները ցուցաբերում են ԿԶՆ-ների ինդեքսի էականորեն ավելի բարձր արժեքներ՝ պայմանին չբավարարող երկրների համեմատ:

- ***Արդյունքների ապրոբացիան Հայաստանի Հանրապետության օրինակով***
- Հայաստանի համար գնահատվել են կառավարելիության պայմանի բաղադրիչները. ինստիտուցիոնալ բազմազանություն, օրթոգոնալացված գիտելիքի բազմազանություն, գիտելիքի օգտագործման գործակից, կառավարվող բարդություն: Համակցված կառավարման ունակությունը չնչին չափով գերազանցում է կառավարվող բարդությունը: Ցույց է տրվում, որ կառավարելիության դեֆիցիտը բաժանվում է ինստիտուցիոնալ և գիտելիքային փոխադարձ չփոխարինելի տիպերի, իսկ դրա հաղթահարման եղանակը որոշվում է դեֆիցիտի տիպով: Հայաստանի համար, որտեղ գիտակրթական պրեմիան բացակայում է, օպտիմալ է ճանաչվում կոմպլեմենտար ռազմավարությունը՝ ինստիտուցիոնալ, կրթական և մշակութային բաղադրիչների միաժամանակյա համաձայնեցված զարգացումը:

- ***Գործնական առաջարկություններ զարգացման քաղաքականության համար***
- Ձևակերպվել են գործնական առաջարկություններ ՀՀ կայուն զարգացման քաղաքականության համար. ապահովել նախադպրոցական կրթության առաջանցիկ զարգացումը, բարձրացնել կրթության ծախսերի մասնաբաժինը պետական բյուջեում տարածաշրջանային միջին մակարդակի ուղղությամբ, համաձայնեցնել ինստիտուցիոնալ բարեփոխումները երկրի մշակութային կոդի հետ՝ հենվելով CCI-ի վրա որպես ախտորոշման գործիք, և օգտագործել կառավարելիության պայմանը որպես ռազմավարական ծրագրերի հավասարակշռվածության թեստ դրանց հաստատումից առաջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Եզրակացությունում» ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները՝ կառավարելիության դեֆիցիտի՝ որպես ԿԶՆ-ների իրականացման գլխավոր արգելքի բացահայտումը, չորս գիտական ավանդույթների սինթեզը

միասնական տեղեկատվատեսական պայմանում, մշակութային բարենպաստության ինդեքսի կառուցումը, մշակութային գործոնների ազդեցության գնահատումը ԿՀՆ-ների բնապահպանական բաղադրիչի և երկրների թվային պատրաստվածության վրա, կառավարելիության դեֆիցիտի երկու տիպերի և դրանց հաղթահարման եղանակների տարբերակումը, մշակութածնության և կրթական աղքատության կառավարման դինամիկ մոդելների մշակումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համար կոմպլեմենտար ռազմավարության հիմնավորումը: Ստացված արդյունքների ամբողջությունը կազմում է սոցիո-մշակութային գործոնների պետական կառավարման ամբողջական գործիքակազմ, որը կիրառելի է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ անցումային տնտեսություն ունեցող այլ երկրներում՝ դրանց մշակութային առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հետազոտության արդյունքների հիման վրա ձևակերպվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Կայուն զարգացման նպատակների իրականացման ճանապարհին, հատկապես անցումային տնտեսություն ունեցող երկրներում, գլխավոր խոչընդոտը ոչ թե տնտեսական ռեսուրսների սահմանափակությունն է, այլ կառավարելիության կառուցվածքային դեֆիցիտը, որի աղբյուրը ձևական ինստիտուտների և ոչ ձևական մշակութային կոդերի միջև անհամաձայնեցվածությունն է: Հասարակության՝ ռեսուրսները զարգացման արդյունքների վերածելու կարողությունը որոշվում է այդ համաձայնեցվածության որակով, այլ ոչ թե ծախսերի ծավալով՝ որպես այդպիսին:

2. Պատմության «բնական փորձերը»՝ Արևմտյան և Արևելյան Գերմանիայի, Հյուսիսային և Հարավային Կորեայի, ինչպես նաև ԱՄՆ-ի և Արգենտինայի զարգացման հետագծերի տարամիտման օրինակները, հաստատում են, որ համադրելի մեկնարկային ներուժի և ընդհանուր մշակութային ժառանգության պայմաններում վճռորոշ դեր են խաղում ինստիտուտները և դրանց համաձայնեցվածությունը մշակութային միջավայրի հետ: Սա հիմնավորում է սոցիո-մշակութային միջավայրի դիտարկումը ոչ թե որպես արտաքին ֆոն, այլ որպես պետական կառավարման անմիջական օբյեկտ:

3. Գոյություն ունեցող գիտական ուղղություններից ոչ մեկը առանձին վերցրած չի ձևավորում սոցիո-մշակութային գործոնների կառավարման ամբողջական լեզու. ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը մշակույթը նկարագրում է որպես ոչ ձևական սահմանափակումների համակարգ, սակայն այն թողնում է քանակական պլանավորման սահմաններից դուրս, կիբեռնետիկան կառավարելիության պայմանը ձևակերպում է վերացական մակարդակում, գիտելիքի աճի տեսությունը գիտելիքի դերը հիմնավորում է հայեցակարգային

առումով, իսկ մշակութային չափումների տեսությունները տարբերությունները նկարագրում են ստատիկ կերպով: Այդ խզումը հաղթահարելու համար անհրաժեշտ է դարձել դրանց սինթեզը միասնական կառուցվածքի մեջ:

4. Մշակվել է ԿԶՆ-ների իրականացման գործընթացում սոցիալ-տնտեսական համակարգերի կառավարելիության բացահայտման միասնական տեղեկատվատեսական մոտեցում, որը մեկ ձևական կառուցվածքում սինթեզում է Էշբիի կիբեռնետիկան, Մոկիրի օգտակար գիտելիքի աճի տեսությունը, Նորթի, Աճեմօղլուի և Աուզանի ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը, ինչպես նաև Հոֆստեդեի և Շվարցի մշակութային չափումների տեսությունները: Ինստիտուցիոնալ ալիքի և գիտելիքի ալիքի գումարելիությունը ներմուծվում է ոչ թե պարզ անալոգիայով, այլ բխեցվում է տեղեկատվական բազմազանության լոգարիթմական չափից, ինչը մոտեցմանը հաղորդում է մաթեմատիկական խստություն:

5. Առաջարկվել է կառավարելիության պայմանի բաղադրիչների՝ ինստիտուցիոնալ բազմազանության, գիտելիքի բազմազանության, գիտելիքի օգտակար օգտագործման տեղեկատվական գործակցի և կառավարվող բարդության բազմազանության ամբողջական քանակական գնահատման մեթոդաբանություն՝ 2002–2023 թվականների 12 միջազգային բաց տվյալների բազաների հիման վրա: Կիրառվել է գիտելիքի ալիքի օրթոգոնալացման մեթոդը ինստիտուցիոնալ ալիքի նկատմամբ, ինչը թույլ է տալիս վերացնել դրանց սերտ փոխկախվածության խնդիրը:

6. Կառուցվել և էմպիրիկորեն ստուգվել է Մշակութային բարենպաստության ինդեքսը՝ CCI-ն, որը բացատրում է ԿԶՆ-ների իրականացման ինդեքսի միջերկրային տարբերությունները:

7. Բացահայտվել է անորոշությունից խուսափման ինդեքսի և ԿԶՆ-ների իրականացման փոխկապակցության մեջ ճնշման էֆեկտը. ինստիտուտների որակի և մարդկային զարգացման մակարդակի վերահսկման դեպքում թույլ զույգային կոռելյացիան ուժեղանում է, ընդ որում՝ զարգացած երկրների խմբում կապը մոտ է զրոյին, իսկ մնացած երկրներում այն արտահայտված դրական բնույթ ունի:

8. Իրականացվել է մշակութային գործոնների ազդեցության բազմակողմանի վերլուծություն ԿԶՆ-ների բնապահպանական բաղադրիչի վրա՝ Հոֆստեդեի և Շվարցի մոդելների, սոցիալական վստահության ցուցանիշների և Ժուրավլյովի դիսկրետ դասակարգման ալգորիթմի համատեղ կիրառմամբ՝ առավելագույն հնարավոր թվով երկրների ընտրանքի հիման վրա:

9. Բացահայտվել է երկրների թվային պատրաստվածության քանակական կախվածությունը մշակութային պրոֆիլից և գնահատվել է մշակութային չափումների միջնորդավորված դերը «թվայնացում — կայուն զարգացում» փոխկապակցության մեջ:

10. Հաստատվել է, որ սոցիո-մշակութային գործոնները բաժանվում են դան-դաղ՝ արժեքային միջուկներ, կրոնական դիրքորոշումներ, հիմնարար նորմեր, և արագ՝ կրթական պրակտիկաներ, նախադպրոցական կրթության ընդգրկվածություն, ընթերցողական ակտիվություն, թվային վարքագիծ, բաղադրիչների, որոնք ունեն կառավարելիության սկզբունքորեն տարբեր հորիզոններ: Սա մեթոդաբանական առումով հաղթահարում է «մշակույթը հնարավոր չէ փոխել» առարկությունը արագ բաղադրիչների նկատմամբ, որոնց վրա էլ պետք է կենտրոնանա զարգացման քաղաքականությունը:

11. Բացահայտվել է, որ սոցիո-մշակութային գործոնների կառավարելիության դեֆիցիտը միատարր չէ և բաժանվում է երկու որակապես տարբեր տիպերի: Ինստիտուցիոնալ դեֆիցիտն առաջանում է ձևական ինստիտուտների անբավարար բազմազանության պայմաններում և դրսևորվում է նրանով, որ նույնիսկ կուտակված օգտակար գիտելիքը չի վերածվում զարգացման արդյունքների: Էպիստեմիկ դեֆիցիտն առաջանում է գիտելիքի թերօգտագործման դեպքում և դրսևորվում է նրանով, որ որակյալ ինստիտուտները չեն ստանում անհրաժեշտ բովանդակային լցավորում: Այս դեֆիցիտների սկզբունքային տարբերությունը դրանց փոխարինելի չլինելն է. մեկի լրացումը չի փոխհատուցում մյուսի պակասը, քանի որ ինստիտուցիոնալ ալիքը և գիտելիքի ալիքը կառավարելիության պայմանի մեջ հանդես են գալիս որպես փոխլրացնող, այլ ոչ թե փոխարինող մեծություններ:

12. Հաստատվել է, որ կառավարելիության դեֆիցիտի հաղթահարման եղա-նակը որոշվում է դրա տիպով, իսկ կառավարելիության պայմանի մեկ բաղադրիչի մեկուսացված ավելացումը սահմանափակվում է հագեցման էֆեկտով: Կրթական աղքատության կառավարման մոդելում հագեցումը տրված է կառուցվածքային կերպով՝ ընդգրկվածության լոգիստիկ սահմանափակման և կառավարչական ազդեցությունների նվազող հատույցի միջոցով, իսկ Պոնտրյագինի առավելագույնի սկզբունքով իրականացված սցենարային հաշվարկը ցույց է տալիս, որ ինստիտուցիոնալ ալիքի և գիտելիքի օգտագործման գործակցի ֆիքսված արժեքների պայմաններում կառավարչական տարողունակությունը մոտենում է իր սահմանային մակարդակին:

13. Մշակվել է մշակութածնության կառավարման դինամիկ տնտեսամաթե-մատիկական մոդել՝ օպտիմալ կառավարման տեսության գործիքակազմի

կիրառմամբ: Աշխատանքում մշակութածնությունը սահմանվում է որպես հասարակության մշակութային բնութագրերի ձևավորման, վերարտադրության և ժամանակի ընթացքում նպատակային փոփոխության գործընթաց, որը, ի տարբերություն դրա դասական մեկնաբանության՝ որպես տարերային պատմական կայացման, դիտարկվում է որպես կառավարվող դինամիկ համակարգ: Մշակութածնության կառավարելիությունն ապահովվում է սոցիո-մշակութային միջավայրի արագ բաղադրիչների հաշվին, մինչդեռ դանդաղ արժեքային միջուկները մոդելում դիտարկվում են որպես պարամետրեր, այլ ոչ թե որպես կառավարող փոփոխականներ:

14. Մշակվել է կրթական աղքատության օպտիմալ կառավարման մոդել, որը էմպիրիկորեն ստուգվել է Հայաստանի Հանրապետության պատմական տվյալների հիման վրա. մոդելը տրամաչափվել է 2015 թվականի ցուցանիշի փաստացի արժեքի հիման վրա և հաստատվել 2019 թվականի փաստացի տվյալներով, ինչը նրան հաղորդում է կանխատեսումային կայունություն:

15. Կառավարելիության պայմանի էմպիրիկ ստուգումը 133 երկրների տվյալների հիման վրա հաստատել է դրա ախտորոշիչ ուժը. պայմանին բավարարող երկրները ցուցադրում են ԿՀՆ-ների միջին ինդեքսի ավելի բարձր մակարդակ, քան մյուս երկրները:

16. Հայաստանի Հանրապետության դիրքի վերլուծությունը ցույց է տվել, որ օպտիմալ է կոմպլեմենտար ռազմավարությունը՝ ինստիտուցիոնալ, կրթական և մշակութային բաղադրիչների միաժամանակյա և համաձայնեցված զարգացումը: Գիտության և կրթության մեջ մեկուսացված ներդրումը՝ առանց ինստիտուցիոնալ բարեփոխումների, սահմանափակվում է հագեցման էֆեկտով, իսկ ինստիտուցիոնալ վերափոխումները՝ առանց կրթական ներուժի վրա հենվելու, այդ ներուժը թողնում են չիրացված:

17. Կրթական աղքատության կառավարման մոդելի զգայունության վերլուծությունը ցույց է տվել, որ առավել արդյունավետ կառավարչական ազդեցությունը նախադպրոցական կրթության ընդգրկվածության ընդլայնումն է: Սա սահմանում է բյուջետային ծախսերի առաջնահերթ ուղղությունը. կրթության վաղ աստիճաններում կատարվող ներդրումները առավել մեծ ներդրում ունեն կրթական աղքատության երկարաժամկետ նվազեցման գործում:

18. Ստացված արդյունքների հիման վրա ձևակերպվել են գործնական առաջարկություններ Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման պետական քաղաքականության համար՝ ապահովել նախադպրոցական կրթության առաջանցիկ զարգացումը որպես կրթական աղքատության նվազեցման առավել արդյունավետ ուղղություն, բարձրացնել կրթության

ծախսերի մասնաբաժինը պետական բյուջեում՝ այն մոտեցնելով տարածաշրջանային միջին մակարդակին, ինստիտուցիոնալ բարեփոխումները համաձայնեցնել երկրի մշակութային կոդի առանձնահատկությունների հետ՝ հենվելով մշակութային բարենպաստության ինդեքսի վրա որպես ախտորոշման գործիք, կառավարելիության պայմանն օգտագործել որպես ռազմավարական ծրագրերի հավասարակշռվածության ստուգման թեստ մինչև դրանց հաստատումը, ինչպես նաև զարգացնել մասնագիտական մանկավարժական կադրերը և խթանել բնակչության ընթերցողական ակտիվությունը՝ որպես կրթական աղքատության նվազման վրա նշանակալիորեն ազդող գործոններ:

19. Ստացված արդյունքների ամբողջությունը՝ կառավարելիության պայմանը, դրա բաղադրիչների քանակական գնահատման մեթոդաբանությունը, Մշակութային բարենպաստության ինդեքսը և օպտիմալ կառավարման դինամիկ մոդելները, ձևավորում է սոցիո-մշակութային գործոնների պետական կառավարման ամբողջական գործիքակազմ, որը կիրառելի է ԿՀՆ-ների իրականացման ռազմավարական ծրագրերի մշակման ժամանակ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ անցումային տնտեսություն ունեցող այլ երկրներում՝ դրանց մշակութային առանձնահատկությունների հաշվառմամբ: Հետագա հետազոտությունների հեռանկարային ուղղություն է կառավարվող սոցիո-մշակութային բնութագրերի շրջանակի ընդլայնումը և առաջարկված մոտեցման կիրառումը պետական քաղաքականության առանձին ոլորտային խնդիրների նկատմամբ:

Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրատարակվել են հետևյալ գիտական աշխատանքներում՝

1. **Саргсян Г.Л., Мартиросян А.А.** Теоретическая модель оптимального управления культурогенезом поведения для достижения ЦУР ООН // Проблемы социально-экономического развития: поиски, перспективы, решения. Сборник научных статей — 2 (11), Ереванский филиал РЭУ им. Г.В. Плеханова. — Ереван: ООО «ИНФОКОПИ», 2024. — С. 62–84. — DOI: 10.61546/25792679-2024.2.11-em-04:

2. **Մարտիրոսյան Ա.** Մշակույթը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների հասանելիության առնչություններում // Գիտական Արցախ. — 2024. — № 4 (23). — Էջ 199–216. — DOI: 10.52063/25792652-2024.4.23-199:
3. **Мартиросян А.А., Кочинян Н.С., Саргсян С.Г.** Проблемы развития цифровой экосистемы в контексте целей устойчивого развития // Экономическое развитие России: инновационные стратегии в контексте глобальной трансформации: Материалы Международной научно-практической конференции. — 2024. — Т. 3. — С. 183–188:
4. **Мартиросян А.А.** Модель оптимального управления стимулирования развития чтения // Вестник Российско-Армянского университета. — 2025. — № 2. — С. 47–70. — DOI: 10.24412/1829-0450-2025-2-47-70:
5. **Мартиросян А.А.** Управление культурно-образовательными процессами для минимизации учебной бедности в контексте целей устойчивого развития // Вестник инженерной академии Армении. — 2024. С. 10–19. — DOI: 10.64201/18290043-1eaa24-10:
6. **Мартиросян А.А.** Влияние культуры и социальных факторов на репродуктивное здоровье населения Армении: комплексный анализ проблем репродуктивного здоровья и сексуального образования // Armenian Journal of Health & Medical Sciences (AJHMS), Специальный выпуск. — 2024. С. 12–20. — DOI: 10.54235/27382737-2024.v4.2-12:
7. **Саргсян Г.Л., Кочинян Н.С., Саргсян С.Г., Мартиросян А.А.** «Культурная экосистема» в ЦУР как фактор регионального измерения интеграционных процессов // Большая Евразия: Развитие, Безопасность, Сотрудничество: Материалы VII Международной научно-практической конференции. — 2025. — Т. 1, ч. 4. — С. 373–379:
8. **Sargsyan H., Martirosyan A., Sargsyan S., Kochinyan N.** Recognition of the Influence of Sociocultural Factors on the Level of Sustainable Development of Countries // Economic Studies (Ikonomicheski Izsledvania). — 2026. — Vol. 35, Issue 1. — P. 59–78. — DOI: 10.56497/esj260104. — Scopus:
9. **Саргсян Г.Л., Мартиросян А.А.** Управление сложностью: институциональное разнообразие, знания и траектории развития // Вестник инженерной академии Армении. — 2025. С. 18–31. — DOI: 10.64201/18290043-2eaa2024-16:

МАРТИРОСЯН АРМЕН АКИЛЕСОВИЧ

КЛЮЧЕВЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ СОЦИО-КУЛЬТУРНЫМ ФАКТОРОМ В КОНТЕКСТЕ ЦЕЛЕЙ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ

Автореферат диссертации на соискание учёной степени кандидата экономических наук по специальности 08.00.02—«Экономика и управление народным хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 6 июля 2026 г. в 13:30, на заседании Специализированного совета 015 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

АННОТАЦИЯ

Актуальность. Спустя десять лет после принятия Повестки 2030 лишь 17% целевых показателей ЦУР находятся на траектории своевременного достижения. Расхождение траекторий стран с сопоставимыми ресурсами указывает на действие культурно-институциональной среды, недостаточно учитываемой стандартными моделями роста. В переходных экономиках, к которым относится РА, несогласованность формальных институтов и культурных кодов снижает результативность реформ.

Цель и задачи. Разработка теоретико-методологических подходов и инструментов управления социокультурным фактором в контексте ЦУР: формулировка единого условия управляемости, объединяющего кибернетику Эшби, теорию знания Мокира, институциональную экономику Норта–Аджемоглу–Аузана и измерения Хофстеде–Шварца; методология количественной оценки её компонентов; эмпирический анализ воздействия культуры на экологическую составляющую ЦУР и цифровую готовность стран; модели управления культурогенезом и учебной бедностью с применением оптимального управления; апробация на материале РА. Объект — социально-экономические системы стран как объект управления; предмет — закономерности количественной оценки культурно-институциональной среды.

Научная новизна. Социокультурный фактор преобразован из качественно описываемого контекста в управляемый объект государственной политики; разработан единый информационно-теоретический подход к управляемости социально-экономических систем, объединяющий ранее обособленные традиции институциональной экономики, теории знания, кибернетики и культурных измерений; построен и апробирован Индекс культурной благоприятности (CCI), объясняющий межстрановой разброс Индекса ЦУР; разработаны и эмпирически проверены модели оптимального управления культурогенезом и учебной бедностью.

Значимость и результаты. Теоретическая значимость — единый формальный подход к описанию социально-экономических систем в единстве институтов, знания и культуры. Практическая — готовые инструменты управления (CCI, модель учебной бедности, условие сбалансированности стратегии). Главным препятствием достижению ЦУР в странах с переходной экономикой выступает не ограниченность ресурсов, а структурный дефицит управляемости двух невзаимозаменяемых типов — институционального и эпистемического. Для РА оптимальной признана комплементарная стратегия: согласованное развитие институциональной, образовательной и культурной составляющих с приоритетом расширения охвата дошкольным образованием.

MARTIROSYAN ARMEN AKILES

KEY ISSUES OF MANAGING THE SOCIO-CULTURAL FACTOR IN THE CONTEXT OF THE SUSTAINABLE DEVELOPMENT GOALS

Abstract of the thesis for receiving the degree of the PhD in Economics for the specialty 08.00.02 - "Economy, the economics of its spheres and control".

The defense of the dissertation will take place at 1:30 PM, on July 6, 2026 at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address: 52 Abovyan str., Yerevan, 0025.

ABSTRACT

Relevance. Ten years after the adoption of the 2030 Agenda only 17% of the SDG targets are on track to be met on time. The divergence of trajectories of countries with comparable resources points to the cultural-institutional environment, insufficiently captured by standard growth models. In transition economies, including Armenia, the mismatch between formal institutions and informal cultural codes reduces the effectiveness of reforms.

Purpose and objectives. To develop theoretical-methodological approaches and tools for managing the sociocultural factor in the context of the SDGs: a unified manageability condition combining Ashby's cybernetics, Mokyr's theory of knowledge growth, the institutional economics of North–Acemoglu–Auzan, and the cultural dimensions of Hofstede–Schwartz; a methodology for quantitative assessment of its components; an empirical analysis of the effect of culture on the environmental component of the SDGs and on countries' digital readiness; dynamic models of culturogenesis and learning poverty management using optimal control; approbation on the material of Armenia. The object is socio-economic systems as objects of management; the subject is patterns of quantitative assessment of the cultural-institutional environment.

Scientific novelty. The sociocultural factor has been transformed from a qualitatively described context into a manageable object of state policy; a unified information-theoretic approach to the manageability of socio-economic systems has been developed, combining the previously separate traditions of institutional economics, the theory of knowledge growth, cybernetics, and cultural dimensions; the Cultural Conduciveness Index (CCI) has been constructed and tested, explaining cross-country variation of the SDG Index; dynamic models of optimal control of culturogenesis and learning poverty have been developed and empirically tested.

Significance and main results. Theoretical significance — a unified formal approach to describing socio-economic systems in the unity of institutions, knowledge and culture. Practical — ready-to-use tools of state management (CCI, the learning poverty model, the development-strategy balance condition). The principal obstacle to achieving the SDGs in transition economies is not resource scarcity but the structural manageability deficit of two non-interchangeable types — institutional and epistemic. For Armenia the optimal strategy is the complementary one: the coordinated development of institutional, educational and cultural components, with the expansion of preschool education coverage as the most effective control action.